ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 12 >> Հունիսի 2020թ. N ՄՊ/163-2020

Ք. Արմավիր

<<ՄԵԾԱՄՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ, ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ <<ՄԵԾԱՄՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով, 36-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետով, 4-րդ մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ը>> ենթակետով, 68-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> ենթակետով, 6-րդ մասով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N683-Ա որոշման 4-րդ կետի պահանջների.

որոշում եմ՝

1. <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը, բաժնետոմսերի մարման միջոցով, նվազեցնել 4964190 (չորս միլիոն ինը հարյուր վաթսունչորս հազար մեկ հարյուր իններսուն) Հայաստանի Հանրապետության դրամով:
2. Հաստատել <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ կանոնադրական կապտալը՝ 179666086.6 (մեկ հարյուր յոթանասունինը միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար ութսունվեց և վաթսուն լումա) Հայաստանի Հանրապետության դրամ, հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի քանակը՝ 35933 (երեսունհինգ հազար ինը հարյուր երեսուներեք), մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հանձնարարել <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին (Մ. Վանյան)՝ ընկերության կանոնադրության փոփոխությունը սահմանված կարգով և ժամկետում գրանցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

12.06.2020

VERIFIED OCSP 12.06.2020 17:56:29 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230